# ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել **2012**թ,օգոստոսի **10**-ին, Երևանում:
Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության առողջապահության դաշնային նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր):
Համագործակցության շրջանակներն են՝

- Առողջապահության համակարգի և բժշկական ապահովագրության համակարգի զարգացում,
- Առողջապահության օրենսդրություն,
- Հանրային առողջապահություն,
- Փոխպատվաստում,
- Արյան փոխներարկում,
- Քաղցկեղի կանխարգելում,
- Անեսթեզոլոգիա,
- Վերարտադրողական առողջություն,
- Ճառագայթաբանություն,
- Վերականգնողական բժշկություն,
- Հանրային-մասնավոր գործընկերություն առողջապահության բնագավառում,
- Առողջապահության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- Փորձի փոխանակում հանրային առողջապահության ոլորտի կազմակերպման մոդելների վերաբերյալ,
- Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող համատող ծրագրերի իրականացում,
- Փոխպատվաստման համակարգի վերաբերյալ փորձի, գիտելիքների և կազմակերպչական բոդելների փոխանակում,
- Մասնագետների և դասախոսների փոխանակում,
- Առաջին կետում նշված համագործակցության ուղղություններով լավագույն փորձի փոխանակում,
- Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության այլ համաձայնեցված ձևեր: